Արձանագրության 3
Շինանյութի ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/84» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

11.06.2019թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հայրապետյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Հարոյան /գնահատող/, Կ. Չիլինգարյան /գնահատող/
Ա. Տեր-Թորոսյան /բացող/, Ռ. Սարգսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Ա. Հայրապետյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերի պահանջներին:

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակցի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է հրավերով պահանջվող որոկավորումը հավաստող փաստաթղթերը, որը գնահատող հանձնաժողովի կողմից համարվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Հայրապետյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Սեմուր ընդ Կո ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/84 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Հայրապետյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/80» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Սեմուր ընդ Կո» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Հայրապետյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Հայրապետյան

Անդամներ՝ ---------- Ա. Տեր-Թորոսյան

---------- Է. Հարոյան

---------- Կ. Չիլինգարյան

---------- Ռ. Սարգսյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան